ում է տեղացի Բագուինը, որը ստացել է իւր անունը ծննդավայրից։

Արաբացի պատմաբան Իբն Աբաս հետեւելով Բագուվինին այսպէս է նկարագրում Բագուն։

Բագու քաղաքի նկարագրութիւնը։ Իմացիր որ այդ քաղաքը գտնվում է Խազարեան ծովի ափում [1]) Շիրուանի նահանգում (շրջանում). ծովի ջուրը շփվում է քաղաքի պատերին, շինութիւնները քարից են շինած, կան շատ մեչիդներ (աղօթատեղի) այս տեղ լաւ է օդը, ջուրը թարմ վճիտ պարզ, ջուրը ստացվում է քարեայ ջրհորներից և հոսող աղբիւրներից [2])։

Այս տեղ ցորեան քիչ է բուսնում, այնպէս որ Շիրուանից և Մուղանիցն են ստանում հացը. այս տեղ շատ միրգ կայ, (դրբսից բերած) իսկ այգիները քաղաքից հեռու են (շրջակայ գիւղերում)։

Այս տեղ կայ երկու քարից շինած ամրոցներ. ծովի ջուրը մօտեցել է դոցա, և արդէն մէկը քանդուել է տաճիկները քաղաքին տիրապետելու ժամանակ։ Քաղաքի շրջակայքում կան շատ գիւղօրայք և ամեն մէկը ունի ամրոց։ Այդ քաղաքում կուպրի (смола) հանք կայ, իսկ 7 վերստ (миль) տարածութեան վրայ մի տեղ կայ, որ տեղ կրակը այրվում է առանց մի որ և է նիւթի. կրակը այնպէս է բարձրանում որ լոյսը տեսանելի է լինում մի կամ աւելի օրուայ տարածութեան վրայ [3]) մի քանի ժամանակ այրւում է և յետոյ մարում։ Այս տեղ ծովի մէջ որսում են ջրը-

---

[1])Խազիրք Կասպից ծովի հիւսիսային ծայրումն բնակուած լինելով, որք են Մաղբութք, Զաչան և Զէրքէզ զաղախք, նոցա անունով ծովը կոչվում է և Խազրաց ծով, և Բագուն զովացնող քամին յայտնի է "Խազրաց քամի" անունով։

[2])Բագույում հոսող աղբիւրներ չկան այժմ. քաղաքացիք խմում էին մինչեւ 1893 թիւը ջրհորներից իսկ 1893 թուից խմում են ջրաբաշխական ընկերութեան պատրաստած ծովի զոլորշիացած ջրից. բայց ոչ մէկը և ոչ միւսը առողջարար չեն ուստի և քաղաքային վարչութիւնը մտադիր է Կուր կամ Երասխ գետերից ջուր բերել տալ բազուեցոց համար և շատ հարկաւոր է։

[3])Զափազանցութիւն է ասածն, թէ՝ կրակը մի օրուայ տարածութեան վրայ երեւում է. դուցէ 10 կամ 20 վերստ հեռու երեւայ։